ՀՀ արդարադատության նախարարության
քրեակատարողական վարչության և Հայաստանի
վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության
հիմնադրամի միջև 16.10.2016 կնքված
էներգախնայողության ծառայությունների մատուցման
թիվ 64/2015 (Արմավիր ՔԿՀ) համաձայնագիր

Էներգախնայողության ծառայությունների մատուցման համաձայնագիր թիվ 64/2016

ք. Երևան ----------2016թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունը ի դեմս վարչության պետ Ա. Օսիկյանի, որը գործում է կանոնադրության (կամ լիազորագրի) հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու կամ Շահառու), և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ կամ Կատարող), ի դեմս տնօրեն Թամարա Բաբայանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա,

ա) Հիմնադրամն իրականացնում է Էներգախնայողության ծրագիր՝ (այսուհետ՝ ԷԽ ծրագիր) Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2012 թվականի ապրիլի 20-ին կնքված Գլոբալ բնապահպանական հիմնադրամի Էներգախնայողության ծրագրի դրամաշնորհի համաձայնագրի՝ միջազգային պայմանագրի, ներքո,

բ) Ծրագրին մասնակցելու համար Հիմնադրամին դիմած Շահառուն բավարարում է ծրագրի չափանիշներին,

գ) Շահառուն ընդունում է Էներգախնայողության միջոցառումների /այսուհետ՝ ԷԽՄ/ համար անցկացված մրցույթի արդյունքները և իր տարածքում նախատեսվող ԷԽՄ–երը, դրանց արդյունքում ակնկալվող էներգասպառման տարեկան խնայողությունների տոկոսը,

կնքեցին սույն համաձայնագիրը /այսուհետ՝ <<Համաձայնագիր>> կամ <<ԷԽՀ>>/, հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1. Սույն համաձայնագրով Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության անունից Հայաստանի Հանրապետության միջոցների հաշվին մատուցում է էներգախնայողության ծառայություններ Շահառուի <<Արմավիր>> քրեակատարողական հիմնարկում ըստ սույն Համաձայնագրի դրույթների, ներառյալ

ա) իրականացնել էներգասպառման ուսումնասիրություն, բազային գծի որոշում,

բ) էներգախնայողության միջոցառումների /ԷԽՄ/ նախագծում և իրականացում՝ ըստ Հավելված 1-ի,

գ) ԷԽՄ համար անհրաժեշտ ֆինանսավորման ապահովում,

դ) Շահառուի համապատասխան անձնակազմի հրահանգավորում,

ե) էներգասպառման մոնիտորինգ ԷԽՄ ավարտից հետո,

զ) էներգախնայողության գնահատում և հավաստում,

է) Վճարումների կառավարում և Համաձայնագրով սահմանված այլ գործողություններ:

1.1 Էներգախնայողության ծառայությունների նկարագրությունը

Սույն Համաձայնագրով, որպես <<Ծառայություններ>> սահմանվում են Հավելված_1-ում նշված ԷԽՄ-երի իրականացման համար անհրաժեշտ գործողությունները, ներառյալ անհրաժեշտ գնումների գործընթացը, նախագծման, հավաքակցման և գործարկման գործողությունները, էներգախնայողության գնահատման և հավաստման գործընթացը, շահագործման և պահպանման գործողությունները, էներգասպառման մոնիտորինգի ապահովումը, ֆինանսական միջոցների ապահովումը, վճարումների կառավարումը և այլ ծառայություններ, որոնք կազմում են ԷԽՄ բաղկացուցիչ մասը: Ծառայություններն առավել մանրամասն ներկայացված են համապատասխան հավելվածներում:

ԷԽՄ համար անհրաժեշտ նախագծման, հավաքակցման, շինարարության, տեղակայման և գործարկման, ինչպես նաև գործարկումից հետո մեկ տարվա ընթացքում շահագործման և պահպանման ծառայությունները ձեռք են բերվում համաձայն Համաշխարհային բանկի կողմից ընդունելի ընթացակարգերի: Դրանք ձևավորում են ԷԽՄ ներդրումային արժեք: Ի լրումն Հիմնադրամի կողմից իրականացվող նախնական գնահատումների, ֆինանսական կառավարման, մրցույթների կազմակերպման, մոնիտորինգի և այլ նախատեսված ծառայությունների դիմաց կատարվում է փոխհատուցում ըստ համապատասխան դրույթների:

Սույն Համաձայնագրի ներքո Հիմնադրամի կողմից պատվիրված աշխատանքների իրականացման համար անցկացված մրցույթի արդյունքում ընտրվել է **Ռեդինետ ՓԲԸ**–ն որի հետ պայմանագրի պատճեն կցվում է:

1.2 Ծառայությունների համակարգումը

Հիմնադրամը Շահառուի նշանակած անձնակազմի հետ պետք է համակարգի ԷԽՄ իրականացումը և անհրաժեշտ հրահանգում ապահովի ԷԽՄ շահագործող անձնակազմի համար: Շահառուն պետք է ապահովի իր տարածքում կատարվող այլ աշխատանքների համակարգումը, խուսափելու համար հարկադիր պարապուրդներից:
Հիմնադրամը նշանակում է ծրագրի ղեկավար, ով պատասխանատու է Ծառայությունների մատուցման համակարգման համար:
Շահառուն նշանակում է լիազոր ներկայացուցիչ՝ սույն Համաձայնագրի ներքո իր անունից հանդես գալու համար: Հիմնադրամը համաձայնում է համագործակցել Շահառուի ներգրված ցանկացած ներկայացուցչի կամ խորհրդատուի հետ:

1.3 Ծառայությունների ընդունումը, սեփականության իրավունքի փոխանցումը

1.3.1 Ծառայությունների ընդունումը

ԷԽՄ ներդրումների ավարտից հետո կնքվում է օբյեկտի Շահագործման հանձնման ակտ (այսուհետ՝ Շահագործման հանձնման ակտ), որով ներդրումների արդյունքները դառնում են Շահառուի սեփականությունը:

1.3.2 Փաստաթղթերի հրապարակումն ու տարածումը

Համաձայնագրի ներքո Հիմնադրամի կողմից պատրաստված և ներկայացված բոլոր գծագրերը, մասնագրերը, հաշվետվությունները, մոդելները, էլեկտրոնային նյութերը և այլ նմանատիպ փաստաթղթեր կհանդիսանան շահառուի սեփականությունը: Նշված բոլոր փաստաթղթերը կարող են օգտագործվել հիմնադրամի կողմից, իսկ իրազեկման նպատակով կարող են հրապարակվել Հիմնադրամի կողմից միայն Շահառուի համաձայնությամբ:

2 Վճարումների չափը և կարգը, փոխհատուցումներ

2.1 Վճարման ենթակա գումարը

Շահառուն պարտավորվում է վճարել էներգախնայողության ծառայությունների դիմաց **190,916,365 (մեկ հարյուր իննսուն միլիոն ինը հարյուր տասնվեց հազար երեք հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ** տարաժամկետ վճարմամբ, համաձայն Համաձայնագրի Հավելված 3–ում նշված ժամանակացույցի ըստ հետևյալի.

2.1.1 Շահառուի կողմից ենթակա է վճարման Էներգախնայողության ներդրումների համար **179,510,000 (մեկ հարյուր յոթանասունինը միլիոն հինգ հարյուր տասը հազար) ՀՀ դրամ** (այն ներառում է Հավելված__1-ում նշված ԷԽՄ-երի իրականացման համար անհրաժեշտ գործողությունների համար ծախսված գումարը) սույն Համաձայնագրի հավելված 3–ում նշված տարաժամկետ վճարման ժամանակացույցին համապատասխան:

2.2.2 Շահառուի կողմից ենթակա է վճարման **11,406,365 (տասնմեկ միլիոն չորս հարյուր վեց հազար երեք հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ** Հիմնադրամի կողմից իրականացված ծրագրի նախապատրաստման, էներգետիկ ուսումնասիրությունների, գնումների, ֆինանսական կառավարման, վճարման ժամանակահատվածում մոնիտորինգի, էներգախնայողության չափումների և հավաստումների և ֆինանսական կառավարման և այլ առնչվող ծառայությունների համար՝ որպես Հիմնադրամին փոխհատուցում՝ սույն Համաձայնագրի հավելված 3–ում նշված տարաժամկետ վճարման ժամանակացույցին համապատասխան:

2.2 Վճարման կարգը

Շահառուն բացում է Հատուկ հաշիվ և առանձնացված հաշվառում է իրականացնում սույն Համաձայնագրի ներքո վճարումների կատարման համար: Յուրաքանչյուր ամիս Շահառուն Հատուկ հաշվին է փոխանցում Հավելված 5-ով բերված Էներգասպառման բազային գծին համարժեք էներգասպառման դիմաց հաշվարկված գումար, որից ըստ մատակարարների /գազի, էլեկտրաէներգիայի/ հաշիվների կատարում է վճարում, իսկ մնացած գումարն ըստ ժամանակացույցի վճարում է Հիմնադրամին: Համաձայնագրի համաձայն պարտավորությունների իրականացման համար, Հատուկ հաշվում վճարման պահին

պարտավորությունների իրականացման համար, Հատուկ հաշվում վճարման պահին մնացորդային գումարի անբավարար լինելու դեպքում՝ Շահառուն պարտավոր է համալրել գումարը և ամբողջությամբ վճարել Հավելված 3-ով սահմանված պարտավորությունները: Թույլատրվում է գումարների ավելի արագ վճարում կամ կանխավճար: Ներդրումային արժեքի նախատեսված ժամկետից շուտ ամբողջությամբ վճարելու դեպքում Շահառուն ազատվում է մնացած ամիսների համար Հիմնադրամին փոխհատուցման վճարումից:
Շահառուն Հիմնադրամին վճարման ենթակա գումարները, ըստ ժամանակացույցի, վճարում է Հիմնադրամի Կենտրոնական Գանձապետարանի **900000910159** հաշվեհամարին:

2.3 Հաշվարկային ժամանակահատվածի սկիզբ, վճարման սկիզբ,

2.3.1. Վճարման ենթակա գումարի հաշվարկային ժամանակահատվածի սկիզբ է համարվում Շահագործման հանձնման ակտի ստորագրման ամսվան հաջորդող ամսվա 1-ը: Յուրաքանչյուր հաշվարկված ամսվա համար վճարումն իրականացվում է մինչև հաջորդող ամսվա 15-րդ օրը:
2.3.2. Կապալառուի մեղքով աշխատանքների ուշացման հետևանքով Օբյեկտը ժամկետից ուշ շահագործման հանձնելու, ինչպես նաև Կապալառուի կողմից Օբյեկտը ժամանակից շուտ շահագործման հանձնման դեպքերում Շահառուի հետ կնքված ժամանակացույցը ենթակա է փոփոխության՝ ծառայությունների մատուցման հաշվարկային ժամանակահատվածի սկիզբ համարելով 2.3.1. կետում նշված՝ ծառայությունների մատուցման սկզբի ամսաթիվը:

3 Կողմերի այլ իրավունքներն ու պարտականությունները

3.1. Հիմնադրամի պարտականությունները.

3.1.1. Հիմնադրամը պարտավոր է ապահովել սույն Համաձայնագրով պահանջվող ծառայությունները: Հիմնադրամը պատասխանատու է սույն Համաձայնագրի ներքո իրականացվող բոլոր ծառայությունների համար, որոնք կատարվում են Հիմնադրամի, նրա կապալառուների կամ նրա կողմից լիազորված անձանց կողմից:
3.1.2. Կապալառուի մեղքով աշխատանքների ուշացման հետևանքով Օբյեկտը ժամկետից ուշ շահագործման հանձնելու դեպքում Հիմնադրամը պարտավոր է Շահառուին վճարել Պայմանագրի արժեքի 0,05%-ի չափով տույժ՝ Օբյեկտի շահագործման հանձնման ուշացված (կետանցի) յուրաքանչյուր օրվա համար, սակայն ոչ ավելի, քան Պայմանագրի վերջնական արժեքի 10%-ի չափը: Հաշվանցման արդյունքում թիվ 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցը ենթակա է փոփոխման՝ Շահառուի վճարային պարտավորություններում ներառված էներգախնայողության ներդրումների ամսական վճարումների (որի մեջ չեն ներառվում էներգետիկ ծառայությունների մատուցման վճարը) համապատասխան չափով նվազեցմամբ:
3.1.3. Ջեռուցման սեզոնի ընթացքում 15-օրյա չափումների հիման վրա սույն պայմանագրով սահմանված՝ նվազագույն էներգախնայողության չափը չապահովելու դեպքում (10 տոկոս թույլատրելի շեղումով) Հիմնադրամը Շահառուին վճարում է տուգանք՝ Պայմանագրի արժեքի 10 տոկոսին համարժեք գումարի չափով, որը ենթակա է հաշվանցման Շահառուի կողմից վճարման ժամանակացույցին համապատասխան վճարվելիք՝ էներգախնայողության

ներդրումների ամսական վճարումների (որի մեջ չեն ներառվում էներգետիկ ծառայությունների մատուցման վճարը) հաշվին: Հաշվանցման արդյունքում թիվ 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցը ենթակա է փոփոխման՝ Շահառուի վճարային պարտավորություններում ներառված էներգախնայողության ներդրումների ամսական վճարումների (որի մեջ չեն ներառվում էներգետիկ ծառայությունների մատուցման վճարը)
համապատասխան չափով նվազեցմամբ:
3.1.4. Թերությունների վերացման 365 օր տևողությամբ պատասխանատվության ժամկետից հետո սույն պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանված տարեկան էներգախնայողության չափը չապահովելու դեպքում Հիմնադրամը Շահառուին վճարում է տուժանք՝ Պայմանագրի արժեքի 10 տոկոսին համարժեք գումարի չափով, որը ենթակա է հաշվանցման Շահառուի կողմից վճարման ժամանակացույցին համապատասխան վճարվելիք՝ էներգախնայողության ներդրումների ամսական վճարումների (որի մեջ չեն ներառվում էներգետիկ ծառայությունների մատուցման վճարը) հաշվին: Հաշվանցման արդյունքում թիվ 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցը ենթակա է փոփոխման՝ Շահառուի վճարային պարտավորություններում ներառված էներգախնայողության ներդրումների ամսական վճարումների (որի մեջ չեն ներառվում էներգետիկ ծառայությունների մատուցման վճարը) համապատասխան չափով նվազեցմամբ:

3.1.5. Հիմնադրամը չի կարող պատասխանատվություն կրել, եթե էներգախնայողության մակարդակը ցածր է ակնկալվողից, իրենից անկախ պատճառներով, ինչպիսիք են սպառման ռեժիմի, հարմարավետության մակարդակի, էներգետիկ սակագների փոփոխությունը:

3.2 Շահառուի պարտականությունները

Սույն Համաձայնագրի կատարման և համակարգման նպատակով Շահառուի պարտավոր է.

(i) Շահառուն պարտավոր է Հիմնադրամին տրամադրել Տարածքի վերաբերյալ ցանկացած գծագիր և մասնագիր, որն անհրաժեշտ է աշխատանքների կատարման համար: Շահառուն պետք է տրամադրի Հիմնադրամին այնպիսի ուսումնասիրություններ, որոնք կարող են նկարագրել աշխատանքի տարածքի ֆիզիկական բնութագրերը, իրավական սահմանափակումները և կոմունալ ենթակառուցվածքները:

(ii) Շահառուն պարտավոր է Հիմնադրամին տրամադրել ճշմարտացի և ճշգրիտ տվյալներ և տեղեկատվություն ըստ Հիմնադրամի պահանջի, ներառյալ էներգասպառումը ետ վճարման ժամկետում, ներառյալ հաշիվների քաղվածքների պատճենները և վճարման փաստաթղթերը, շենքի գործունեությունը և զբաղեցվածությունը, ներսի ջերմաստիճանը և այլն:

(iii) Պետք է շենքերը հասանելի դարձնել Հիմնադրամի և նրա կողմից ներգրավված կապալառուների համար, նախնական զննման, էներգետիկ աուդիտի և ծրագրի նախագծման, շինարարության, գործարկման, ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի այցելությունների համար և այլն, ինչպես նաև Հիմնադրամի կողմից ծրագրի արդյունքների փաստաթղթավորման և տարածման

համար, որը կարող է ներառել կարճատև ֆիլմի նկարահանում, լուսանկարում և այլն:

(iv) Պահանջի դեպքում ժամանակին հաստատել փաստաթղթերը՝ խուսափելու համար ծրագրի իրականացման ժամանակացույցի ձգձգումներից:

(v) Ապահովել շինարարական և այլ թույլտվությունների ստացումը:

(vi) Պահպանել և պատշաճ շահագործել ծրագրի ներքո հատկացված բոլոր սարքերը և նյութերը՝ ապահովելու համար նրանց լիարժեք արդյունքները (այսինքն, չփոքրացնել էներգախնայողությունը):

(vii) Հատուկ հաշվին կատարել բազային գծի էներգասպառմանը համարժեք ամսական վճարումները ամբողջությամբ և ժամանակին: Այդ հաշվից կատարել վճարումներ սպառված էներգիայի դիմաց, ինչպես նաև Հիմնադրամին՝ ժամանակացույցի համաձայն:

(viii) Ներդրումների դիմաց վճարման պարտավորությունը պետք է նախատեսել Շահառուի տարեկան բյուջեում:

(ix) Շահառուն սույն Համաձայնագրի ընթացքում կտրամադրի Հիմնադրամին ըստ պահանջի բոլոր տվյալների և փաստաթղթերի կրկնօրինակները, որոնք վերաբերում են էներգիայի օգտագործմանը, կիրազեկի բոլոր նախատեսվող կամ ընթացող միջոցառումների մասին, որոնք կարող են ազդել էներգասպառման վրա, ներառյալ տեխնիկական, կազմակերպչական, կառուցվածքային փոփոխությունները:

4 Էներգախնայողության ծրագիր (Ծրագիր)

Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև կնքված միջազգային պայմանագրի շրջանակներում՝ ուղղված էներգախնայողության ծրագրի իրականացմանը: Ծրագրի փաստաթղթերը ներկայացված են Հիմնադրամի կայքում՝ **www.r2e2.am:**

4.1 Տարեկան էներգախնայողություն

Հիմնադրամը գնահատել է էներգախնայողության մակարդակը ինչպես նշված է Հավելված 2-ում (Էներգախնայողություն), որը ԷԽՄ իրականացման արդյունքում պետք է ապահովվի յուրաքանչյուր տարի: Տարածքում էներգախնայողությունը պետք է գրանցվի, համադրվի և հավաստվի: Այս գործընթացի նկարագրությունը կցված է Հավելված 4–ում բերված պայմանագրում: Շահառուն պարտավոր է ապահովել, որ շենքի շահագործումը (լուսավորությունը, ջեռուցումը) լինի նույն՝ բազային գծի, մակարդակի:

4.2 Էներգախնայողության միջոցառումներ

Էներգախնայողության միջոցառումներն ամփոփ նկարագրված են Հավելված 1-ում, որոնք հետագայում մանրամասն աշխատանքի նախագծով տրամադրվում են Շահառուին: Հիմնադրամը, սույն Համաձայնագրի գործողության ընթացքում իրավունք ունի Շահառուի թույլտվությամբ փոփոխել կամ փոխարինել ցանկացած ԷԽՄ կամ իրականացնել լրացուցիչ ԷԽՄ և փոփոխել ԷԽՄ շահագործման կարգ կամ այլ գործողություն պայմանով, որ

(i) նման գործողությունները չեն փոխի բազային գծի, հարմարավետության և սպասարկման մակարդակը՝ առանց Շահառուի գրավոր համաձայնության,

(ii) այդպիսի փոփոխությունները և լրացումներն անհրաժեշտ են Տարածքում էներգախնայողության հասնելու համար,

(iii) Հիմնադրամն ու Շահառուն պետք է որոշեն ինչ ճշգրտումներ պետք է արվեն Բազային գծի հաշվարկում, եթե անհրաժեշտ է:

ԷԽՄ իրականացումից հետո շահագործման և պահպանման գործընթացը նկարագրված է Հավելված 4-ում բերված պայմանագրում: Բացառությամբ նշված գործողությունների, Շահառուն իրավունք չունի տեղաշարժել, փոփոխել, հանել, կարգավորել, և այլ էական փոփոխություններ կատարել ԷԽՄ կամ դրա մի մասում սույն Համաձայնագրի ընթացքում, առանց Հիմնադրամի նախնական գրավոր ցուցման կամ հաստատման, բացառությամբ արտակարգ իրավիճակների: Ի լրումն իր պարտականությունների, Շահառուն պարտավորվում է տարածքը լավագույնս օգտագործելու և պահպանելու ԷԽՄ լավագույն պայմաններում՝ համաձայն արտադրողի հրահանգների և ապահովել բոլոր էներգասարքերի օգտագործումը լավագույնս:

4.3 Խափանում և արտակարգ իրավիճակներ

Շահառուն պետք է Հիմնադրամին տեղեկացնի հետևյալ իրադարձությունների մասին՝ տեղեկանալուց հետո քառասունութ ժամվա ընթացքում.

ա/ ԷԽՄ կամ նախապես գոյություն ունեցող էներգասպառմանն առնչվող սարքավորումների ցանկացած նշանակալի խափանում,

բ/ ԷԽՄ կամ դրանց օգտագործման ցանկացած նշանակալի փոփոխություն,

գ/ Տարածքի կամ դրա օգտագործման ցանկացած նշանակալի փոփոխություն:

Հիմնադրամը և Շահառուն պետք է Համաձայնագրի դրույթներին համաձայն որոշեն, և եթե անհրաժեշտ է, փոփոխություններ անեն Բազային գծի հաշվարկում:

4.3.1Գրանցված նշանակալի փոփոխություններ

Շահառուն պետք է գրավոր ծանուցի Հիմնադրամին՝ նկարագրելով բոլոր փաստացի կամ նախատեսվող նշանակալի փոփոխությունները դրանք իրականացնելուց ոչ պակաս քան երեսուն (30) օր առաջ: Արտակարգ իրավիճակների դեպքում նախնական ծանուցումը կհամարվի բավարար, եթե արվել է դեպքից հետո քառասունութ (48) ժամվա ընթացքում: Էներգիայի օգտագործման ցանկացած փոփոխություն, որը տեղի է ունեցել նշանակալի փոփոխության արդյունքում պետք է ժամանակին դիտարկվի Հիմնադրամի և Շահառուի կողմից և որոշվի ինչ ճշգրտում պետք է արվի Բազային գծի հաշվարկում,եթե կարիք կա: Հիմնադրամը և Շահառուն համաձայնում են, որ Բազային գծի ցանկացած ճշգրտում պետք է լինի ընդհանուր առմամբ ընդունելի ճարտարագիտական սկզբունքների համաձայն:

4.3.2. Չգրանցված նշանակալի փոփոխություններ

Վճարման սկզբից հետո, գրանցված նշանակալի փոփոխությունների բացակայության պարագայում եթե էներգախնայողությունը շեղվում է ավելի քան տաս տոկոս (10%) ցանկացած ամսվա համար համեմատած տվյալ ամսվա համար նախատեսվածի, կլիմայական պայմանների ճշգրտումից հետո, ապա Հիմնադրամը պետք է ժամանակին դիտարկի այդ փոփոխությունները գտնելու նման շեղումների պայմանները: Հիմնադրամն ու Շահառուն պետք է որոշեն ինչ ճշգրտումներ պետք է արվեն Բազային գծի հաշվարկում, եթե անհրաժեշտ է:

5 Համաձայնագրի լուծումը

5.1 Համաձայնագրի լուծումը Շահառուի նախաձեռնությամբ

Շահառուն իր նախաձեռնությամբ իրավասու է հրաժարվել սույն Համաձայնագրից՝ այդ մասին առնվազն 10 օր առաջ գրավոր ծանուցելով Հիմնադրամին: Ծանուցումը Հիմնադրամի կողմից ստանալու պահից Համաձայնագիրը համարվում է լուծված:
Այս դեպքում Շահառուն պարտավոր է մինչև ծանուցման պահը Հիմնադրամի կողմից սույն Համաձայնագրի շրջանակներում կատարված ծախսերը փոխհատուցել ամբողջությամբ: Շահառուի նախաձեռնությամբ Համաձայնագրի լուծումը կազատի Հիմնադրամին իր բոլոր պարտավորություններից իրականացնելու խզման ամսաթվից հետո, ինչպես նաև էներգախնայողության ծառայությունից խզման ամսաթվից հետո: Շահառուի կողմից Համաձայնագրի լուծումը իրեն ազատում է Հիմնադրամին վճարումներ կատարելուց խզման օրվանից հետո շահագործման, մոնիտորինգի և ուսուցման ծառայությունների դիմաց:

5.2 Համաձայնագրի լուծումը Հիմնադրամի նախաձեռնությամբ

Համաձայնագիրը Հիմնադրամի նախաձեռնությամբ կարող է լուծվել ցանկացած պահի՝ պայմանով, որ Հիմնադրամը կփոխհատուցի Շահառուի կրած վնասները, որոնք կառաջանան Համաձայնագրի իրականացման արդյունքում: Սույն Համաձայնագրի լուծման պահից Համաձայնագրով կողմերի ստանձնած պարտավորությունները դադարում են, բացառությամբ այն պարտավորությունների, որոնք ծագել են մինչև Համաձայնագրի լուծման պահը:

6 Կողմերի կողմից թույլտրված խախտումներ, պատասխանատվություն

6.1 Շահառուի կողմից խախտումներ

Հետևյալ միջադեպերից կամ պայմաններից յուրաքանչյուրը կդիտվի որպես խախտում Շահառուի կողմից սույն Համաձայնագրի ներքո իր պարտավորությունների մասով.

(ա) Հիմնադրամին վճարման ցանկացած ձախողում

(բ) Ցանկացած այլ նշանակալի ձախողում Շահառուի կողմից իրագործելու կամ համապատասխանելու սույն Համաձայնագրի դրույթներին, ժամկետներին ու պայմաններին, բացառությամբ եթե այդպիսի ձախողումն ուղղվել է Շահառուին ծանուցելուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում:

6.2. Պատասխանատվությունը Շահառուի կողմից խախտման դեպքում

Շահառուի կողմից վճարումների ժամանակացույցի խախտման դեպքում, վճարումների կետանցի դեպքում (չվճարում կամ ուշացված վճարումներ) Շահառուն պարտավոր է Հիմնադրամին վճարել չվճարված կամ ուշ վճարված գումարի 0.1% -ի չափով օրական տույժ, սակայն ոչ ավել քան վճարման ենթակա գումարի 10 տոկոսը:

6.3 Հիմնադրամի կողմից խախտումներ

Հետևյալ միջադեպերից կամ պայմաններից յուրաքանչյուրը կդիտվի որպես խախտում Հիմնադրամի կողմից սույն Համաձայնագրի ներքո իր պարտավորությունների մասով.

(i) Հիմնադրամը ձախողել է ԷԽՄ իրականացումը,

(ii) Սույն Համաձայնագրի ներքո իր պարտականությունների կատարումը, ներառյալ համապատասխան անձնակազմի, սարքավորումների, աշխատանքների ապահովումը, ծառայությունների մատուցումը՝ Հիմնադրամի իրավասությունների շրջանակում

(iii) Հիմնադրամի կողմից ցանկացած ձախողում իրականացնել իր պարտականությունները սույն Համաձայնագրի ներքո, բացառությամբ եթե նման ձախողումը ուղղվել է Հիմնադրամին ծանուցում ուղարկելուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում կամ Շահառուի համար ընդունելի ավելի երկար ժամկետում:

6.4 Պատասխանատվությունը Հիմնադրամի կողմից խախտումների դեպքում.

Հիմնադրամի կողմից խախտումների դեպքում Շահառուն պետք է գրավոր ծանուցի՝ նկարագրելով խախտման հիմքերը: Եթե այդ ծանուցումից հետո երեսուն (30) օրվա ընթացքում Հիմնադրամը նախաձեռնում է միջոցներ այդ խախտումները վերացնելու ուղղությամբ, ապա խախտում չի համարվում և պատասխանատվության միջոցներ չեն կիրառվում: Հակառակ դեպքում Շահառուն կարող է դադարեցնել /լուծել/ Համաձայնագիրը: Այդ դեպքում Հիմնադրամը պետք է դադարեցնի բոլոր աշխատանքներն ու ծառայությունները, իսկ Շահառուն պետք է սահմանված կարգով փոխհատուցի արդեն կատարված աշխատանքների կամ տեղակայված նյութերի ու սարքավորումների համար:

7 Այլ պայմաններ

7.1 Կողմերից յուրաքանչյուրը հավաստում է մյուսին, որ

ա/ Ունի պահանջվող իրավասություն, լիազորություն, լիցենզիաներ, թույլտվություններ և այլն, կնքել և իրականացնել սույն Համաձայնագիրը և դրանից բխող պարտավորությունները:
բ/ Սույն Համաձայնագրի կնքումը, իրականացումը համապատասխանաբար հաստատված է, եթե պահանջվում է, իր համապատասխան ընթացակարգերով, և սույն Համաձայնագիրը պատշաճ կարգով կնքվել և ներկայացվել է լիազորված ստորագրողների կողմից, և պարտադիր է կատարման Կողմերի համար:
գ/ Շահառուի կողմից ներկայացված բոլոր գծագրերը, մասնագրերը, ուսումնասիրությունները և դրանց պատճենները մնում են որպես Շահառուի սեփականություն: Սույն Համաձայնագրի ներքո բոլոր ավարտական նախագծերը պետք է դառնան Շահառուի սեփականություն: Բացառությամբ Կողմերից յուրաքանչյուրի համար նշված գծագրերի, մասնագրերի, ուսումնասիրությունների և նախագծերի մեկական օրինակի, այդպիսի գծագրերը, մասնագրերը, ուսումնասիրությունները և նախագծերը պետք է փոխանցվեն Շահառուին:

7.2 Համաձայնագրի փոխանցումը

7.2.1. Շահառուն կարող է փոխանցել կամ վերագրել սույն Համաձայնագիրը կամ դրա ներքո իր իրավունքներն ու պարտականությունները իր վերադասին կամ Տարածքը ձեռքբերողին, կամ դրանում շահագրգռվածին՝ Հիմնադրամի համաձայնությամբ:
7.2.2. Հիմնադրամը կարող է փոխանցել պահանջի իրավունքը Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ֆինանսական լիազոր մարմնի:

7.3 Համաձայնագրի ամբողջականությունը, լրացումներ

Սույն Համաձայնագիրը, ուժի մեջ մտնելուց հետո, իր բոլոր հավելվածների հետ միասին համարվում է միասնական Համաձայնագիր կողմերի միջև և այն կարող է լրացվել կամ փոփոխվել միայն կողմերի միջև գրավոր կնքված համաձայնագրով:

7.4 Ծանուցումներ

Սույն Համաձայնագրով պահանջվող բոլոր ծանուցումները պետք է լինեն գրավոր և կհամարվեն պատշաճ կարգով արված, եթե անձամբ հանձնված է հասցեատիրոջը կամ ստացված է հասցնելու մասին հաղորդագրություն Համաձայնագրում ներառված կամ գրավոր ծանուցված հասցեներով:

7.5 Համաձայնագրի գործողության ժամկետ, միջանկյալ ժամկետ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրման պահից և գործում է մինչև Վճարման ժամանակացույցի վերջին ամսաթիվը կամ վճարման ենթակա գումարների ամբողջական վճարման ամսաթիվը:
Համաձայնագրի ստորագրումից մինչև Վճարման սկիզբը համարվում է "Միջանկյալ ժամկետ", որի ընթացքում էներգախնայողությունները պատկանում են Շահառուին:

7.6 Կողմերի հասցեները և այլ վավերապայմանները.

Արթուր Օսիկյան ----------	Թամարա Բաբայան ----------
Վարչության պետ	Տնօրեն
ՇԱՀԱՌՈՒ	ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
Հասցե: Երևան,Արշակունյանց 63	Հասցե Պռոշյան 1-ին նրբանցք, տուն 32
ՀՎՀՀ900011175016	ՀՎՀՀ: 02580459
Հ/հ 02204739	Բանկ Կենտրոնական Գանձապետարան 900000910159
Հեռ: + (374) 10380389	Հեռ: 374 10 588011
Էլ.փոստ:	Էլ.փոստ: info@r2e2.am

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ստորև հավելվածները կազմում են Շահառուի և Հիմնադրամի միջև կնքված Էներգետիկ ծառայությունների Համաձայնագրի անբաժանելի մասը

Հավելված 1. Էներգախնայողության միջոցառումներ՝ ամփոփ

Հավելված 2. Տարեկան էներգախնայողություններ

Հավելված 3. Վճարման ժամանակացույց

Հավելված 4. ԷԽՄ շինարարական աշխատանքների **պայմանագիր**

Հավելված 5. Բազային գծի հաշվարկ, հարմարավետության և սպասարկման ստանդարտներ

Հավելված 6. Բնապահպանական ստուգաթերթիկ

ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ

REDINET
Customised solutions for your business

Ստանդարտ ձև. Էներգախնայողության միջոցառումների առաջարկ

1. Էներգախնայողության միջոցառումներ (ԷԽՄ)

ԷԽՄ նկարագրություն	ԷԽՄ արժեքը	Տարեկան խնայողություն	Զուտ բերված արժեքը (ԶԲԱ)	Տեղակայվող սարքավորման սպեցիֆիկացիա
1. Նախագիծ	8,500,000	X	X	Նախագիծը՝ "Ռեդինետ" ՓԲԸ, հեռ. 010 249106
2. Տաք ջրամատակարարման համար արևային ջրատաքացուցիչների տեղադրում	42,000,000	X	X	1500 ջերմային հողմակներով ճնշումային արևային վակումային ջրատաքացուցիչներ: Յուրաքանչյուր արևային կոլլեկտոր պետք է ունենա 58մմ տրամագծով և 1.8մ երկարությամբ և տարեկան կտրվածքով նվազագույնը 70% արդյունավետությամբ 30 ջերմային խողովակ: Կոլլեկտորների երաշխիքային ժամկետը 5 տարի, հզորության անկումն մոտ 10%:
3. Արևային ֆոտովոլտային կայան - 100կՎտ, անհրաժեշտ բոլոր բաղադրիչներով:	70,560,000	X	X	250Վտ հզորությամբ արևային ՖՎ մոդուլներ, TUV հավաստագիր, երաշխիքային ժամկետը 5 տարի, ինվերտորը զինված վեր հարթակի վրա հիմնված էներգիայի մոնիտորինգի համակարգով: Առաջարկվում է ՖՎ մոդուլներ 305-ից 320 Վտ հզորությամբ:
4. Էլ. Էներգիայի երկկողմանի հաշվիչ	400,000	X	X	Արևային ֆոտովոլտային կայանը ՀԷՑ-ին միանալու համար: Արժեքը ներկայացված է ըստ պահանջի, բայց նպատակահարմարությունը քննարկման առարկա է (կցված՝ Երկկողմանի էլեկտրաէներգիայի հաշվառման հաշվիչի տեղադրման նպատակահարմարություն):

ՌԵԴԻՆԵԹ ՓԲԸ | REDINET CJSC | ՀՀ, Երևան 0014, Ազատության պող. 24/7-24/8 | 24/7-24/8 Azatutyan Ave., Yerevan 0014, Armenia
Հեռ. +374 10 249106, Ֆաքս. +374 10 200540 էլ-փոստ. redinet@redinet.am | Tel.: +374 10 249106 Fax: +374 10 200540 E-mail: redinet@redinet.am
www.redinet.am

5.Արգելափակման գոտու և ներքին տարածքների արտաքին լուսատուների փոխարինում էներգախնայող լուսադիոդային լուսատուներով (LED): 137 հատ 120 Վտ և 8 հատ 200 Վտ:	41,434,000	X	X	Արտաքին լուսատուներ 120Վտ, 4000K, 8800lm, IP65, CRI>75, 5 տարի երաշխիք Լուսարձակներ 200Վտ, 4000K, 20000lm, IP65, CRI>80, 5 տարի երաշխիք
6.Ներքին լուսատուների փոխարինում էներգախնայող 12 Վտ LED լամպերով: 1152 հատ մասնաշենքերում, 200 հատ միջանցքում,120 հատ տնտեսական մասնաշենքում, 80 հատ պատժախցերում, 75 հատ տեսակցության սենյակներում, 45 հատ կարանտինում:	5,016,000	X	X	12 Վտ հզորությամբ E27 լամպեր, ~ 960 լումեն, 80 գունափոխանցման գործակցով, TUV (կամ համարժեք պահանջներով), երաշխիքային ժամկետը՝ 3 տարի:
7.Կենտրոնական մոնիտորինգի համակարգ	8,000,000	X	X	3 հատ Ջերմային հաշվիչ – ES-740M, RS-485 ինտերֆեյս, -30C +80C: 4 հատ Էլեկտրաէներգիայի հաշվիչ – SDM-630M CT, 3 ֆազ չափելու հնարավորություն, RS-485 ինտերֆեյս, -20C +55C: Արդյունաբերական ծրագրավորվող համակարգիչ, Ethernet 100 Մբ/վ, -20C +55C: GSM մոդեմ LAN ելքով:
8.Գործարկում, չափման և հավաստագրման , շահագործման և պահպանման (12 ամիս) ծառայություններ	3,600,000	X	X	Համաձայն Չ և Հ պլանի և մշակված մեթոդոլոգիայի և բանաձևերի հիման վրա: Համաձայն Շ և Պ պլանի:
Ընդամենը	179,510,000	47,227,630	202,327,000	

2. ԷԽՄ –երի իրականացման աշխատանքային պլանը կցվում է.

ՌԵԴԻՆԵՏ ՓԲԸ | REDINET CJSC | 22, Երևան 0014, Ազատության պող. 24/7-24/8 | 24/7-24/8 Azatutyan Ave., Yerevan 0014, Armenia
Հեռ. +374 10 249106, Ֆաքս. +374 10 200540 էլ-փոստ. redinet@redinet.am | Tel.: +374 10 249106 Fax: +374 10 200540 E-mail: redinet@redinet.am
www.redinet.am

Հավելված 2.

Տարեկան խնայողություն

ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ

Էներգիայի սպառումը	Նախքան ԷԽՄ, կՎտժ	ԷԽՄ-ից հետո, կՎտժ	Խնայողություն, %
ՔԿՀ	3 031 193	1 948 748	35.7

ՀՀ արդարադատության
նախարարության ՔԿ վարչություն

Պետ
Արթուր Օսիկյան

Հայաստանի վերականգնվող
էներգետիկայի և էներգախնայողության
հիմնադրամ

Տնօրեն
Թամարա Բաբայան

Հավելված 3

Վճարման ժամանակացույց

2016թ. ---------- ------ին Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության (<<Արմավիր>> քրեակատարողական հիմնարկ) միջև էներգետիկ ծառայությունների մատուցման համաձայնագրի

(ՀՀ դրամ)

Ներդրման գումար				179,510,000
Ամիս	Էներգախնայողության ներդրումների գումարի մնացորդ (ըստ ամիսների)	Էներգախնայողության ներդրումների գումար (ամսական վճարումներ)	Էներգետիկ ծառայությունների մատուցման վճար	Ընդամենը վճարման ենթակա գումար
1	179,510,000	8,975,500	373,979	9,349,479
2	170,534,500	0	367,746	367,746
3	170,534,500	0	361,513	361,513
4	170,534,500	8,975,500	355,280	9,330,780
5	161,559,000	0	349,047	349,047
6	161,559,000	0	342,814	342,814
7	161,559,000	8,975,500	336,581	9,312,081
8	152,583,500	0	330,348	330,348
9	152,583,500	0	324,115	324,115
10	152,583,500	8,975,500	317,882	9,293,382
11	143,608,000	0	311,649	311,649
12	143,608,000	0	305,416	305,416
13	143,608,000	8,975,500	299,183	9,274,683
14	134,632,500	0	292,950	292,950
15	134,632,500	0	286,717	286,717
16	134,632,500	8,975,500	280,484	9,255,984
17	125,657,000	0	274,251	274,251
18	125,657,000	0	268,018	268,018
19	125,657,000	8,975,500	261,785	9,237,285
20	116,681,500	0	255,552	255,552
21	116,681,500	0	249,319	249,319
22	116,681,500	8,975,500	243,086	9,218,586
23	107,706,000	0	236,853	236,853
24	107,706,000	0	230,620	230,620
25	107,706,000	8,975,500	224,388	9,199,888
26	98,730,500	0	218,155	218,155
27	98,730,500	0	211,922	211,922
28	98,730,500	8,975,500	205,689	9,181,189
29	89,755,000	0	199,456	199,456
30	89,755,000	0	193,223	193,223
31	89,755,000	8,975,500	186,990	9,162,490
32	80,779,500	0	180,757	180,757
33	80,779,500	0	174,524	174,524
34	80,779,500	8,975,500	168,291	9,143,791
35	71,804,000	0	162,058	162,058
36	71,804,000	0	155,825	155,825
37	71,804,000	8,975,500	149,592	9,125,092
38	62,828,500	0	143,359	143,359
39	62,828,500	0	137,126	137,126
40	62,828,500	8,975,500	130,893	9,106,393
41	53,853,000	0	124,660	124,660
42	53,853,000	0	118,427	118,427
43	53,853,000	8,975,500	112,194	9,087,694
44	44,877,500	0	105,961	105,961
45	44,877,500	0	99,728	99,728
46	44,877,500	8,975,500	93,495	9,068,995
47	35,902,000	0	87,262	87,262
48	35,902,000	0	81,029	81,029
49	35,902,000	8,975,500	74,796	9,050,296
50	26,926,500	0	68,563	68,563
51	26,926,500	0	62,330	62,330
52	26,926,500	8,975,500	56,097	9,031,597
53	17,951,000	0	49,864	49,864

39988383

54	17,951,000	0	43,631	43,631
55	17,951,000	8,975,500	37,398	9,012,898
56	8,975,500	0	31,165	31,165
57	8,975,500	0	24,932	24,932
58	8,975,500	8,975,500	18,699	8,994,199
59	0	0	12,466	12,466
60	0	0	6,233	6,233
Ընդամենը		**179,510,000**	**11,406,365**	**190,916,365**

*Վճարման ժամանակացույցը ենթակա է փոփոխման և վերանայման՝ համաձայն պայմանագրի դրույթների

ՀՀ արդարադատության
նախարարության
քրեակատարողական վարչություն
(<<Սևան>> քրեակատարողական
հ/հ մ/հ հ/հ

Վարչության պետ
Ա. Օսիկյան

Հայաստանի վերականգնվող
էներգետիկայի և էներգախնայողության
Հիմնադրամ

Տնօրեն
Թ. Բաբայան

Հավելված 5.

Բազային գիծ

ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ

No	Ամիս	Տաք ջրամատակարարում, կՎտժ	Արտաքին լուսավորություն, կՎտժ	Լուսավորություն, կՎտժ
1	Հունվար	25667	29,591	52763
2	Փետրվար	23183	24,743	47656
3	Մարտ	25667	24,922	52762
4	Ապրիլ	24839	19,468	51061
5	Մայիս	25667	19,842	52762
6	Հունիս	24839	17,939	51060
7	Հուլիս	25667	19,018	52762
8	Օգոստոս	25667	21,009	52762
9	Սեպտեմբեր	24839	22,923	51060
10	Հոկտեմբեր	25667	26,364	52762
11	Նոյեմբեր	24839	27,972	51061
12	Դեկտեմբեր	25667	30,209	52763
Տարի		302213	284000	621234

ՀՀ արդարադատության
նախարարության ՔԿ վարչություն

Պետ
Արթուր Օսիկյան

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ

Տնօրեն
Թամարա Բաբայան